ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 1997 թվականի N14
քաղ. Երևան

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը հաշվի առնելով «Հայգազարդ» ՊԿ-ի կառուցվածքային փոփոխություններից բխող խնդիրները, կապված ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից 1997թ. օգոստոսի 8-ի N7 որոշմամբ սպառողներին բնական գազի վաճառքի սահմանված սակագնի կիրառման և այդ սակագնում գազ ներկրող՝ «Հայգազարդ» ՊԿ-ի, գազ տեղափոխող՝ «Հայտրանսգազ» ՊՁ-ն և գազ բաշխող՝ «Հայգազ» ՊՁ-ն մասնաբաժինների տարանջատման անհրաժեշտության հետ, պարզաբանում է՝

1. 10.0 հազ. նխմ սպառումը գերազանցող սպառողներին բնական գազի վաճառքի սակագնում (**79.1** ԱՄՆ դոլարին համարժեք դրամ յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար)՝

ա) ՀՀ ներկրվող բնական գազի արժեքն է (ներառյալ ԱԱՀ)

C_0 **= 66.0** ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ներկրված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար;

բ) «Հայգազարդ» ՊԿ-ի մասնաբաժինն է (ներառյալ ԱԱՀ)

$C_{гк}$ **= 3.45** ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ներկրված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար;

գ) «Հայտրանսգազ» ՊՁ-ն մասնաբաժինն է (ներառյալ ԱԱՀ)

$C_{ТГ}$ = 2.746 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդունված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար, պայմանով, որ գազի տեղափոխման ընթացքում տեխնոլոգիական կորուստների և սեփական կարիքների համար գազի ծախսի գումարային փաստացի արժեքը (P_{1F}) հավասար է պլանային (P_{1P}) 3.8 % արժեքին;

Եթե նշված տեխնոլոգիական կորուստների և սեփական կարիքների համար գազի ծախսի գումարային փաստացի արժեքը (P_{1F}) տարբերվում է պլանային արժեքից (P_{1P}), ապա «Հայտրանսգազ» ՊՁ-ն մասնաբաժինը հաշվվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$C_{ТГ}$ = 5.598 - 0.7505 x P_{1F} ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդունված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար

դ) «Հայգազ» ՊՁ-ն մասնաբաժինն է (ներառյալ ԱԱՀ)

$C_{АГ}$ = 2.721 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդունված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար, պայմանով, որ գազի բաշխման և իրացման ընթացքում տեխնոլոգիական կորուստների և սեփական կարիքների համար գազի ծախսի գումարային փաստացի արժեքը (P_{2F}) հավասար է պլանային (P_{2P}) 1.68 % արժեքին;

Եթե նշված տեխնոլոգիական կորուստների և սեփական կարիքների համար գազի ծախսի գումարային փաստացի արժեքը (P_{2F}) տարբերվում է պլանային արժեքից (P_{2P}), ապա «Հայգազ» ՊՁ-ն մասնաբաժինը հաշվվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$C_{АГ}$ = 4.05 - 0.791 x P_{2F} ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդունված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար

2. Եթե «Հայգազարդ» ՊԿ-ը բնական գազը վաճառում է «Հայգազ» ՊՁ-ը, որը այն բաշխում և իրացնում է սպառողներին, ապա վաճառքի սակագինը հաշվվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$C_1 = \frac{C_0 + C_{\text{ГК}} + C_{\text{ТГ}}}{1 - 0{,}01 \times \mathrm{P_F}}$$

և հավասար է

$$C_1 = \frac{66 + 3{,}45 + 2{,}746}{1 - 0{,}01 \times 3{,}8} = 75{,}05$$ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ վաճառված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի համար

3. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. օգոստոսի 8-ի N7 որոշմամբ 10.0 հազ նխմ սպառումը գերազանցող սպառողներին բնական գազի վաճառքի սահմանված սակագնի, ինչպես նաև սույն որոշման 1 և 2 կետերում ԱՄՆ դոլարով ներկայացված մասնաբաժինների և վաճառքի սակագնի արտահայտումը դրամով կատարել հաշվետու ամսվան նախորդող ամսի 25-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված դոլարի և դրամի հաշվարկային կուրսով:

4. Ելնելով գազի համակարգում գործող ձեռնարկությունների կարգավիճակների և ծախսերի կառուցվածքի փոփոխության հնարավորությունից, կապված «Հայռուսգազարդ» ԲԸ ստեղծման հետ, սույն որոշումով ներկայացված պարզաբանումները կիրառել սկսած ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի օգոստոսի 8-ի N7 որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 1997թ. դեկտեմբերի 31-ը:

ՀՀ էներգետիկայի
հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**